# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 132

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 24-ը դեկտեմբերի 2019 թվականի թիվ 16 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 24.12.2019թվականի թիվ 16 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացումներ և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին,

3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ, 2019թվականի դեկտեմբերի 22-ի հրդեհից տուժած, Սամվել Բադալյանի դիմումը քննարկելու և դրամական օգնություն հատկացնելուն համաձայնություն տալու մասին,

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող տեխնիկան անհատույց օգտագործման իրավունքով <<Արենի>> ՀՈԱԿ-ին փոխանցելուն համաձայնություն տալու մասին,

5. <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցված տեխնիկայով մատուցվող ծառայությունների սակագները հաստատելու մասին,

6. 2019թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 23-ը ընկած ժամանակահատվածում <<Արենի>> ՀՈԱԿ-ի կատարած աշխատանքների հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին,

7. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Ռոման Ներսիսյանի դիմումը քննարկելու մասին,

8. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի բնակիչ Նորիկ Ղազարյանին դրամական աջակցություն ցուցաբերելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 133-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի կապիտալ ծախսերի համար սուբվենցիա գործառնական դասակարգման 38 բաժնի, 01 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 78 177 551 (յոթանասունութ միլիոն մեկ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

ա) Ջրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին` 6 770 650 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ,

բ) Կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին` 4 948 390 (չորս միլիոն ինը հարյուր քառասունութ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ,

գ) Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին` 14 132 565 (տասնչորս միլիոն մեկ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին` 9 521 860 (ինը միլիոն հինգ հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

դ) Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին` 42 804 086 (քառասուներկու միլիոն ութ հարյուր չորս հազար ութսունվեց) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի վարչական մասի կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4111

(աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ և ուղղել.

ա) կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4215 (ապահովագրական ծախսեր) հոդվածին՝ 112 000 (մեկ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ, 4822 (այլ հարկեր) հոդվածին՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ) Արենի համայնքի սոցիալապես անապահով անձանց աջակցություն գործառնական դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին՝ 536 000 (հինգ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ,

գ) Աղբահանություն գործառնական դասակարգման 05 բաժնի 01 խմբի 01 դասի 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածին՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

3. Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից պակասեցնել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ և ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔՆԱՐԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԻԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 134

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ, 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՀՐԴԵՀԻՑ ՏՈՒԺԱԾ, ՍԱՄՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով` Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հարգել Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ, 2019թվականի դեկտեմբերի 22-ի հրդեհից տուժած Սամվել Բադալյանի դիմումը և նրան տրամադրել միանվագ դրամական օգնություն ` 100 000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 135

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵԽՆԻԿԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ-ԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն սույն որոշման հավելված 1-ում նշված տեխնիկան անհատույց օգտագործման իրավունքով <<Արենի>> ՀՈԱԿ-ին փոխանցելուն:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

հավելված N1

Արենի համայնքի ավագանու
24.12.2019թ-ի թիվ 135
որոշման

# ՑԱՆԿ

## <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվող գույքի

հազ. դրամ

| Հ/հ | Գույքի անվանումը | չափի միավորը և քանակը | միավորի արժեքը | ընդամենը արժեքը |
|---|---|---|---|---|
| 1 | Միկրոավտոբուս 18 տեղ <<Ford Transit Bus 460 LWB EF>> | 1հատ | 21,900 | 21,900 |
| 2 | Արտաճանապարհային ավտոմեքենա Ուազ 390945-552 | 1հատ | 7,100 | 7,100 |
| 3 | Գրեյդեր ԳՍ-10.07 | 1հատ | 33,500 | 33,500 |
| 4 | Երկկողմանի հիդրավլիկ շրջադարձով շերեփ | 1հատ | 850 | 850 |
| Ընդամենը | | | | 63,350 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 136

### <<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

Հաստատել <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցված տեխնիկայով մատուցվող ծառայությունների սակագները՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

հավելված N1

Արենի համայնքի ավագանու
24.12.2019թ-ի թիվ 136 որոշման

2020 թվականին <<Արենի>> ՀՈԱԿ-ի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

| Հ/Հ | Ծառայության անվանումը | չափի միավորը | արժեքը /դրամ/՝ ներառյալ վառելիքը | արժեքը /դրամ/՝ առանց վառելիքի | Լրացուցիչ տվյալներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Միկրոավտոբուս 18 տեղ <<Ford Transit Bus 460 LWB EF>> | կմ | 200 | -- | յուրաքանչյուր կիլոմետրից 50 դրամ հատկացնել վարորդին որպես աշխատավարձ (ներառյալ հարկերը) |
| 2 | Գրեյդեր ԳՍ-10.07 | ժամ | համայնքի բնակիչների համար 1 ժամը՝ 10 000 | համայնքի բնակիչների համար 1 ժամը 7000 | 1 ժամվա համար վարորդին որպես աշխատավարձ հատկացնել 1300 դրամ (ներառյալ հարկերը) |
| | | | կազմակերպությունների համար 1 ժամը՝ 13000 | կազմակերպությունների համար 1 ժամը՝ 10000 | 1 ժամվա համար վարորդին որպես աշխատավարձ հատկացնել 1300 դրամ (ներառյալ հարկերը) |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 137

### 01.10.2019-23.12.19ԹԹ. ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԵՆԻ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

01.10.2019-23.12.19թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը ընդունել ի գիտություն` համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

հավելված
Արենի համայնքի
ավագանու 24.12.2019թ-ի
թիվ 137 որոշման

<<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ 2019թ.

***2019թ հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 23-ը կատարված աշխատանքներ***

առ 23.12.2019 դրությամբ

| h/h | Աշխատավարձ | գումարը |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | **8,634,370** |
| 2 | Աղբահանության տրակտորավարներին հատկացված դիզելային վառելիք/1395 լիտր | **558,000** |
| | Ընդամենը | **9,192,370** |
| *h/h* | *Կատարած աշխատանքները* | Գումարը |
| | Ագարակաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 3 | Դպրոցի 50մ խմելու ջրագծի կառուցում | 48,000.0 |
| 4 | 200 գծմ կոյուղագծի կառուցում | 111,000.0 |
| Ընդամենը | | **159,000** |
| | Արփի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 5 | Արփի բնակավայրի 5 փողոց 2 փակուղում ջրագծի հիմնանորոգման աշխատանքներ | 221,000.0 |
| 6 | Կոյուղագծի վթարի վերականգնման աշխատանքներ | 43,800.0 |
| *Ընդամենը* | | ***264,800*** |
| | Աղավնաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 7 | Արվեստի դպրոցի մետաղական դարպասների կառուցում | 250,200.0 |
| 8 | Մանկապարտեզի շենքի տանիքի մասնակի կառուցում | 120,400.0 |
| 9 | 2-րդ փողոցում հենապատի կառուցում | 557,300.0 |
| 10 | 1, 8-րդ և 11 -րդ փողոցների կոյուղագծերի վթարների վերականգնում | 111,000.0 |
| 11 | 2-րդ փողոցի սկզբնամասում և վերջնամասում խմելու ջրագծի վթարի վերականգնում | 44,200.0 |
| 12 | Վարչական շենքի խմելու նոր ջրագծի անցկացում | 58,200.0 |
| 13 | 2-րդ, 3-րդ և 21 -րդ փողոցներում կոյուղագծի դիտահորերի խցանումների վերականգնում | 136,800.0 |
| 14 | Աբանա ջրամբարի ոռոգման ջրագծի (2-րդ և 6-րդ փողոցների խաչմերուկում) 40 գծմ-ի վերանորոգում | 195,000.0 |

| | | |
|---|---|---|
| 15 | <<Բաղչաջրի>> ՕԿՋ-ի սնուցում խմելի ջրագծի վթարի վերականգնում | 49,600.0 |
| 16 | Խմելու ջրագծի ջրբաշխ հորերում d=15 մմ-ոց 10 հատ երկաթյա փականների տեղադրում և վարչական շենքի կողպեկի տրամադրում | 32,000.0 |
| *Ընդամենը.* | | ***1,554,700*** |
| | Արենի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 17 | Գինու փառատոնի նախապատրաստական աշխատանքներ | 404,800.0 |
| 18 | Աղբավայրի մաքրում | 99,000.0 |
| 19 | Խաչի տակ թաղամասում ճանապարհի լայնացման, խճապատման և ջրահեռացման աշխատանքներ | |
| Ընդամենը | | ***503,800*** |
| | Ելփին բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 20 | Հանդամիջյան ճանապարհի 1.5 կմ երկարությամբ բարեկարգում | 153,200.0 |
| 21 | Դպրոցի խմելու ջրի խողովակաշար 125 մ | 69,400.0 |
| 22 | Աղբավայրի մաքրում DT տրակտորով | 31,000.0 |
| 23 | 3 փողոցի խճապատում 36 ուղեբեռ | 560,000.0 |
| 24 | Միջնակարգ դպրոցի սրահի բեմի երեսապատման աշխատանքնե | 65,540.0 |
| Ընդամենը | | ***879,140*** |
| | Խաչիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 25 | Մշակույթի տան ներսում խաղասենյակի վերանորոգման աշխատանքներ | 350,000.0 |
| *Ընդամենը* | | ***350,000*** |
| | Չիվա բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | |
| 26 | Խիկար Սմբատյանի հողակտորի միջով անցնող խրամուղու հետլիցք էքսկավատորով | 35,600.0 |
| 27 | Կոյուղագծի մասնակի կառուցման աշխատանքներ | 52,000.0 |
| 28 | 170 գծմ խմելու ջրագծի կառուցում | 185,500.0 |

| | | |
|---|---|---|
| 29 | 7-րդ և 2-րդ փողոցների բաժանարարների վերանորոգում | 61,600.0 |
| ***Ընդամենը*** | | **334,700** |
| Գնիշիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | | |
| ***Ընդամենը*** | | ***0.0*** |
| Ռինդ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի **2019**թ կատարված աշխատանքներ | | |
| **30** | 110 մմ-ոց ճնշումային փականի տեղադրում | 16,700.0 |
| **31** | Կաքավաձոր հանդամասում խմելու ջրի խողովակաշարի վթարի վերականգնում | 34,500.0 |
| **32** | ՕՎՋ-ից հոսող խմելու ջրագծի 240 գծմ խողովակների մոնտաժում (նախահաշվային արժեք ) | 396,800.0 |
| Ընդամենը | | **448,000** |
| Ընդամենը կատ աշխատանքներ | | **4,494,140** |
| *Ընդամենը (աշխատավարձ + կատարված աշխատանքներ)* | | ***13,686,510*** |

ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Ասատրյան

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Սիմոնյան

Արենի համայնքի ... «Արենի» ... 08914384 ... ՀՈԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 138

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՄԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Ռոման ներսիսյանի դիմումը՝ գույքահարկից ազատելու մասին, մուտքագրել համայնքապետարանի քարտուղարություն, ուսումնասիրել և օրենքով սահմանված կարգով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 139

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն Արենի համայնքի Ռինդ բնակավայրի բնակիչ Նորիկ Ղազարյանին հատկացնել դրամական աջակցություն՝ 100 000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**